ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ Արտոնագիր 707

CHAMBRE DES AVOCATS DES LA RA CHAMBER OF ADVOCATES OF RA

ք. Երևան, Հս/Ամտ Վ-3, տ 106 harutyunbaghdasaryan.adv@gmail.com
25.09.2025թ. 035/Բ-25 հեռ. 093-144-282

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻՆ
0010, Երևան
Վազգեն Սարգսյան փող., 5 շենք
էլ.հասցե՝ vchrabek@court.am
Գործի համար ՏԴ/0002/11/25
Բողոք բողոք անձ՝ Հարություն Բաղդասարյան
փաստաբան, արտոնագիր թիվ 707
ն/ք 016754467, տրվ. 23.10.2024թ. 008-ի կողմից
Պատասխանող՝ Տավուշի մարզի դատախազություն
Դատախազ՝ Արմեն Մուրադյանին
Տավուշի մարզ, ք. Իջևան, Իջևանյան 1
Էլ. հասցե՝ tavush@prosecutor.am, Հեռ՝ 010 511-663
Պատճենը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին
ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23
qr.veraqnnich@court.am

Վճռաբեկ բողոք

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2025թ. հուլիսի 31-ի թիվ ԵԴ1/0125/11/25
«հատուկ վերանայման բողոքը մերժելու մասին» որոշման դեմ

Պատվարժան դատարան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ դատավոր Աղրինե Ղուկասյանի նախագահությամբ, 2025թ. հուլիսի 31-ին, գրավոր ընթացակարգով դատական վերանայման ենթարկելով ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025թ. փետրվարի 21-ի թիվ ԵԴ1/0125/11/23 «Բողոքը քննության առնելու մասին» որոշման դեմ Հարություն Բաղդասարյանի հատուկ վերանայման բողոքը, որոշեց այն մերժել՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025թ. փետրվարի 21-ի որոշումը թողնելով անփոփոխ:

Սույն բողոք բերվում է մի պարզ պատճառով.

իմ քաղաքացիական պարտք եմ համարում ի ցույց դնել երկրում տիրող իրավական նիհիլիզմը, որպեսզի հետագայում (ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ վերականգնելուց հետո) ինչպես միջազգային ատյաններում (ՄԱԿ Արդարադատության դատարան, ՄԻԵԴ), այնպես էլ ներպետական դատարաններում պատասխանատվության ենթարկվեն Հայաստանի իշխանավորները (նույն թվում՝ և սույն բողոքը քննած անձինք) մարդկայնության դեմ

հանցագործություններ կատարելու ու դրանք կոծկելու, ինչպեսև՝ պետականությունը ոչնչացնելու և մարդու (ազգի) իրավունքները ոտնահարելու համար:

Ինձ համար անընդունելի են մեր երկրի հասցեին ինչպես՝ ինչ-որ էրդոպուտինալիևների բարբաջանքները, այնպես էլ՝ մհերգրիգորյանների ու նիքյոլփաշինյանների ու նրանց հլու ծառայող ներպետական պաշտոնյաների հակահայ և ազգակործան գործողությունները:

1. **<u>Վճռաբեկ բողոքի իրավական հիմքերը</u>**

1.1. ՀՀ քր.դատ.օր. 352 հոդ. 5-րդ մասի համաձայն.

5. Հատուկ վերանայումը Վճռաբեկ դատարանում կիրառվում է այն դեպքում, երբ բողոքարկվում է վերաքննիչ դատարանի՝ սույն օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված դատական ակտը:

1.2. ՀՀ քր.դատ.օր. 394 հոդ. 1-ին մասի 2-րդ կետի համաձայն.

1. Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման ենթակա են վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման արդյունքով կայացված դատական ակտերը, ….

1.3. ՀՀ քր.դատ.օր. 354 հոդ. 3-րդ և 4-րդ մասերի համաձայն.

3. Հատուկ վերանայումն իրականացվում է բողոքում նշված հիմքի և այն հաստատող փաստերի սահմաններում:

4. Հատուկ վերանայման կարգով դատական ակտ կայացնելիս վերադաս դատարանը հիմնվում է միայն ստորադաս դատարանում հետազոտված ապացույցների կամ նյութերի և վարույթի մասնակիցների արած պնդումների վրա:

***1.4.* ՀՀ քր.դատ.օր. 395 հոդ. համաձայն.**

1. Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոքը բերվում է համապատասխան դատական ակտն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

1.4.1. **Ես այդ ժամկետը պահպանել եմ.** Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել եմ սեպտեմբերի 11-ին (ծրարի վրա առկա է սեպտեմբերի 10 ամսաթվով կնիք): Իսկ ահա Վերաքննիչ դատարանը խախտել է օրենքը, ճիշտ այնպես, ինչպես խախտել էր Առաջին ատյանի դատարանը

1.4.2. Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակվել է 2025թ. հուլիսի 31-ին (?!, !?), այսինքն՝ պահպանվել է ՀՀ քր.դատ. օր. 392 հոդ. 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. *Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման վարույթն իրականացվում և ավարտվում է բողոքը վարույթ ընդունելուց հետո՝* ***տասնօրյա ժամկետում*** (վարույթ է ընդունվել հուլիսի 21-ին): Սակայն այն ինձ ուղարկվել է 2025թ. սեպտեմբերի 9-ին, թեպետ ուղեկցող գրության վրա նշված է 18 օգոստոսի 2025թ. ամսաթիվը:

1.4.3. Իսկ Առաջին ատյանի դատարանը 21.02.2025թ. (?! !?) կայացրած որոշումն ուղարկել է 4 ամիս անց՝ 26.06.2025թ.

1.4.4. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քր.դատ.օր. 393 հոդ. 2-րդ մասը, այն է.

2. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման արդյունքով կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ գրավոր ընթացակարգով վարույթի դեպքում՝ կայացնելու օրը: Դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ ***ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, ուղարկվում է դատական վարույթի մասնակիցներին և համապատասխան առաջին ատյանի դատարան:***

***1.5.* ՀՀ քր.դատ.օր. 171 հոդ. 3-6-րդ մասերի համաձայն.**

*3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է **առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը 24.00-ին:** Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետն ավարտվում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետը լրանալու օրը ոչ աշխատանքային է, ապա ժամկետի վերջին օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը, սակայն այս կանոնը չի կիրառվում անձի ազատության սահմանափակման հետ կապված ժամկետները հաշվելիս:*

*4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը **փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ,** իսկ անազատության մեջ պահվող կամ բժշկական հաստատությունում գտնվող անձանց համար՝ եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը համապատասխան հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը:*

*5. Բողոքը կամ այլ փաստաթուղթը **փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով,** իսկ անազատության մեջ պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:*

6. Վարույթին ներգրավված անձանց կողմից փաստաթղթերի ստացման ժամկետը հաստատվում է վարույթի նյութերին կցված պատշաճ փաստաթղթով:

1.5.1. ՀՀ քր.դատ.օր. 171 և 393 հոդվածների ներքո համադրելով Վերաքննիչ դատարանի գործողությունը հաստատում եմ, որ Վերաքննիչ դատարանը բաց է թողել որոշումը կողմերին ուղարկելու ժամկետը (նույնիսկ, եթե հիմք ընդունենք կից գրությունը՝ օգոստոսի 18): Բացի այդ, օրենքը փոստին հանձնելու ժամանակը որոշում է **փոստային դրոշմով** (և ոչ թե դատավորի գրությամբ), այսինքն դատավարության մասնակցի վրա է դնում դատավարական ժամկետում փաստաթուղթը փոստին հանձնելու պարտականությունը:

1.5.2. ՀՀ քր.դատ.օր. 172 հոդ. համաձայն.

1. Ժամկետն անցնելուց հետո կատարված գործողություններն առաջացնում են անբարենպաստ վարութային հետևանքներ, եթե ժամկետը չի վերականգնվում:

1.5.3. Սույն պարագայում խնդիրն այն է, որ եթե փաստաբանն է խախտում, ասենք, բողոք տանելու ժամկետը, ապա դատարանները (վարույթն իրականացնող մարմինները), փաստաբանի համար առաջացնում են անբարենպաստ վարութային հետևանքներ:

1.5.4. Մինչդեռ, որևէ հետևանք չի առաջանում, երբ ժամկետները խախտում են վարույթն իրականացնող մարմինները:

1.6. Ուստի **ՀՀ վճռաբեկ դատարանի** առջև **բարձրացվում են** հետևյալ **հարցերը.**

1.6.1. **Խախտե՞լ է** արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը քրեադատավարական օրենքի 171 և 393 ***հոդվածների պահանջները,*** եթե՝ այո, ապա

1.6.1.1. արդյո՞ք բողոք տարած անձի համար այն չի առաջացնում բարենպաստ վարութային հետևանքներ, այսինքն՝ արդյո՞ք օրենքի ուժով չի ճանաչվում բողոքը բավարարված:

1.6.2. Դատավորի գության վրա նշված ամսաթիվը կարո՞ղ է համարվել փոստին հանձնված ժամկետ:

1.6.3. Պարտավոր չէր արդյո՞ք Վերաքննիչ դատարանն անդրադառնալու Առաջին ատյանի դատարանի՝ ժամկետը խախտելու պահանջին:

1.7. ՀՀ քր.դատ.օր. 396 հոդ. համաձայն.

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևության, որ՝

1) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հետևանքով կայացված դատական ակտը կարող էր խաթարել արդարադատության բուն էությունը:

1.8. ՀՀ քր.դատ.օր. 397 հոդ. համաձայն.

1. Սույն օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվածից բացի, Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոքը պետք է բովանդակի նաև սույն օրենսգրքի 396-րդ հոդվածով նախատեսված՝ բողոքը վարույթ ընդունելու պայմանները և դրանք հիմնավորող փաստարկները:

2. Վճռաբեկ բողոքը ներկայացվում է նույն հիմքով, որով վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման կարգով բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, բացառությամբ այն դեպքի, երբ վերաքննիչ դատարանը կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից էապես տարբերվող դատական ակտ:

1.8.1. Գտնում եմ, որ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող և՛ փաստական (ուշացումով փոստին հանձնելը), և՛ իրավական (խախտվել է ՀՀ քր.դատ.օր. 393 հոդ. 4-րդ և 5-րդ մասերի պահանջները) հանգամանքները, ուստիև բողոքի 1.6. կետում բարձրացված հարց(եր)ի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար:

Որպես Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալը և վճռաբեկ բողոքը նույն հիմքով, որով վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման կարգով բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, ներկայացնելը հավաստող ապացույցներ մեջ եմ բերում վերաքննիչ բողոքում արձանագրված հանգամանքները:

1.9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մեջ է բերել ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. 2-րդ մասը համաձայն որի.

2. *Համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական*:

1.10. Մինչդեռ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

քննիչի համար կարող են քրեական վարույթ նախաձեռնելու առիթ լինել զանգվածային լրատվության միջոցներում առերևույթ հանցանքի մասին հրապարակված տեղեկությունները:

1.11. Այսինքն՝ եթե անգամ իմ ներկայացրած հաղորդման մեջ հանցագործության վերաբերյալ տեղեկություններ չկան (?!), ապա դրանք առկա են բազում լրատվական նյութերում, և եթե վարույթն իրականացնող մարմինները չլինեին գործադիր իշխանության կցորդը, ապա ներկայացված հիմքերով անպայման վարույթ կնախաձեռնվեր:

1.11.1. Անդրադառնալով բողոքին՝ դատարանն արձանագրել է, որ բողոքում նշված հաղորդումն իր մեջ պարունակում է *ոչ թե հանցագործության վերաբերյալ տեղեկություններ*, որոնք, ինքնին հիմք կարող էին ծառայել ողջամիտ ենթադրություն ձևավորելու, որ դրանով կարող է փաստվել որևէ արարք, որին կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական

գնահատական, այլ դրանք կոնկրետ հայտարարությունների կամ գործողությունների վերաբերյալ անձանց արտահայտած դիրքորոշումներն են, որոնք երևույթների նկատմամբ արտահայտում են սուբյեկտիվ ընկալումը և կրում են բացարձակ սուբյեկտիվ բնույթ:

1.11.2. Դատարանը դրանով իր համաձայնությունն է հայտնել վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշման հետ, այն առումով, որ իմ ներկայացրած հաղորդումը իմ սուբյեկտիվ ընկալումների ու վերացական ենթադրությունների արդյունք է;

1.11.3. Իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն էլ համակարծիք է դատախազների ու առաջին ատյանի դատարանի հետ և գտնել է, որ *հաղորդման մեջ նշված հանգամանքներով առկա չի եղել քրեաիրավական գնահատական տալու հնարավորություն, որի պայմաններում դատարանը եկել է իրավաչափ եզրահանգման, ուստի դատարանի որոշումը հիմնավոր է, և այն բեկանելու հիմքեր առկա չեն*,

1.12. ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն.

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:.

1.12.1. Այսինքն՝ ՀՀ վերաքննիչ դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանն ու դատախազությունը ճիշտ են արել, որ վարչական մարմնի ղեկավար(ներ)ի գործողություններում հանցակազմ չեն տեսել: Ու, ըստ նրանց, գործադիր իշխանությունն իրականացրել է այնպիսի *գործողություններ, որոնց համար լիազորված* է եղել *Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

1.12.2. Մինչդեռ՝ պետության տարածքային ամբողջականությունը խախտելը, պատերազմ հրահրելը և այն տանուլ տալը, թշնամու օգտին գործողություններ կատարելը ոչ թե լիազորված գործողություններ են, այլ՝ հանցագործություններ:

1.12.3. Ուստի սույն բողոքով ՀՀ վճռաբեկ դատարանի առջև բարձրացնում եմ նույն խնդիրը.

- ի՞նչ հիմքեր են անհրաժեշտ, որ քննիչները, դատախազները և դատարանները տեսնեն հանցագործությունները, գիտակցեն, որ երկիրը կործանվում է, ու իրենց անգործությունը նույնպես հանցագործություն է:

1.13. ՀՀ քր.դատ.օր. 395 հոդ. համաձայն.

1. Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոքը բերվում է համապատասխան դատական ակտն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

1.14. ՀՀ քր.դատ.օր. 396 հոդ. համաձայն.

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևության, որ՝

1) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հետևանքով կայացված դատական ակտը կարող էր խաթարել արդարադատության բուն էությունը:

1.15. Սույն գործի առումով գտնում եմ, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

1.15.1. Գտնում եմ նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, քանի որ առերևույթ առկա են եղել և՛ փաստական, և՛ իրավական հանգամանքներ, որոնց ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր էր բավարարել բողոքը:

1.15.2. Այս առումով Վերաքննիչ դատարանը (առաջին ատյանի դատարանը, դատախազությունը, նախաքննությանն մարմին) պետք է ապացուցեր (ապացուցեին), որ վարչական մարմնի ղեկավարը (կառավարության անդամները) թույլ չի (չեն) տվել օրենքի խախտում, պետությունը տարածքներ չի կորցրել և երկրի անվտանգությունը դրանից չի տուժել:

1.15.3. Բացի այդ, առկա է ևս մի տեսական (ավելի ճիշտ՝ պրակտիկ) հարց. ինչո՞ւ Սամվել Կարապետյանի, Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանյանի, Միքայել Արքեպիսկոպոս Աջապահյանի ու մյուսների նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում (ըստ իս՝ անհիմն), մինչդեռ հողատուի ու ցեղասպանությունը մերժողների նկատմամբ՝ ոչ:

1.15.4. Չէ՞ որ, ՀՀ Սահմանադրության 29 հոդվածը սահմանում է. *Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է*:

1.16. Իսկ ՀՀ քր.դատ.օր. 16 հոդ. համաձայն.

1. Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

2. Սույն օրենսգրքով նախատեսված դրույթները նույն կարգավիճակն ունեցող անձանց նկատմամբ միատեսակ են կիրառվում:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինների իրավասությունը, նրանց կողմից վարույթի իրականացման ձևը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին դեպքի կամ անձի կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով:

1.17. ՀՀ քր.դատ.օր. 397 հոդ. 2-րդ մասի համաձայն.

2. *Վճռաբեկ բողոքը ներկայացվում է նույն հիմքով, որով վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման կարգով բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, բացառությամբ այն դեպքի, երբ վերաքննիչ դատարանը կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից էապես տարբերվող դատական ակտ:*

1.18. Ուստի, պահպանելով ՀՀ դատավարական օրենքի բոլոր պահանջները, սույն բողոքով ՀՀ վճռաբեկ դատարանի առջև բարձրացնում եմ նույն խնդիրը, ինչ ստորադաս դատարաններում և խնդրում է բավարարել այն:

1.19. Գտնում եմ նաև, որ առաջին ատյանի դատարանը **իրավունք չուներ** իմ ներկայացրած հաղորդումը համարել **ոչ պատշաճ** և քրեական վարույթ նախաձեռնելու առումով՝ **անհիմն,** քանի որ իմ կողմից ներկայացված յուրաքանչյուր հոդվածի վերաբերյալ տվել եմ իմ մեկնաբանությունները**:**

1.20. Իսկ Վերաքննիչ դատարանը համարյա չի անդրադարձել իմ բողոքին, ուստի սույն բողոքում մեջ եմ բերում նախկինում իմ կողմից ներկայացված օրենքներն ու դրանց մեկնաբանությունները: Էլեկտրոնային տարբերակով ուղարկում եմ Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքն ու մի շարք նյութեր և պնդում եմ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններ ներկայացրած բողոքներս: Գտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել բազում հանցագործություններ, և իմ ներկայացրած հաղորդման մեջ տրված են դրանց հիմնավորումները: Դրանք հերքելու համար կա մի ճանապարհ՝ վարույթի նախաձեռնում և վարույթի ընթացքում հակափաստարկների բերում: Հասկանում եմ, որ ոչ մի

դատախազ կամ քննիչ չի կարող ակնհայտ փաստերի դեմ առարկել, ուստի քրեական վարույթ չնախաձեռնելով՝ փորձում են խուսափել իրականության դեմ առճակատելուց:

2. Գործի դատավարական նախապատմությունը

2.1. 27.11.2024թ. թիվ 012/Դ-24 գրությամբ դիմել եմ Տավուշի մարզի դատախազ՝ Արմեն Մուրադյանին և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին՝ քրեական վարույթ նախաձեռնելու և մեղավոր անձանց հանդեպ հանրային քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ:

2.2. 2024թ. դեկտեմբերի 20-ին ստացել եմ Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Է. Դավթյանի՝ «քրեական վարույթ չնախաձեռնելու մասին» 12.12.2024թ. գրավոր տեղեկացումը, համաձայն որի իմ կողմից ներկայացված հաղորդումը չի համապատասխանում ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, քանի որ «Հ. Բաղդասարյանի կողմից տրված առրևույթ հանցանքի մասին հաղորդման և կից փաստաթղթերի մեջ բացակայում են առերևույթ հանցանքի առկայության մասին վկայող բավարար տարրեր»:

2.3. 21.12.2024թ. թիվ 016/Դ-24 գրությամբ բողոք եմ ներկայացրել Տավուշի մարզի դատախազ՝ Արմեն Մուրադյանին և միջնորդել. վերացնել Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Է. Դավթյանի՝ «քրեական վարույթ չնախաձեռնելու մասին» 12.12.2024թ. գրավոր տեղեկացումը և քննիչին հանձնարարել անհապաղ նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն, ինչպես նաև՝ որոշում կայացնել հսկող դատախազին փոխելու վերաբերյալ:

2.4. 04.01.2025թ. ստացել եմ Տավուշի մարզի դատախազի տեղակալ Հ. Աղասարյանի 27.12.2024թ. թիվ 67/5-3602-24 գրությունը, որով ներկայացվել է մարզի դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա. Մուրադյանի «բողոքը քննության առնելու մասին» 26 դեկտեմբերի 2024թ. որոշումը: Համաձայն այդ որոշման՝ Հ. Բաղդասարյանի կողմից ներկայացված առրևույթ հանցանքի մասին հաղորդմամբ և կից փաստաթղթերով «չի փաստվել այնպիսի դեպք, գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող էր տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, որպիսի պայմաններում վարույթի հանրային մասնակից քննիչի վարութային ակտն անօրինական կամ անհիմն գնահատելու, հետևաբար նաև հսկող դատախազին քրեական վարույթ նախաձեռնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հանձնարարություն տալու հիմքերը բացակայում են»: Ուստի՝ մարզի դատախազը որոշել է «քննիչ Է. Դավթյանի քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու վարութային ակտի դեմ Հ. Բաղդասարյանի կողմից ներկայացված բողոքը մերժել»:

2.5. 15.01.2025թ. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական կոմիտեի քննիչ Է. Դավթյանի կողմից քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու և իրավասու դատախազին ուղղված բողոքը մերժելու մասին Տավուշի մարզի դատախազ Ա. Մուրադյանի 2024թ. դեկտեմբերի 26-ի որոշման դեմ բողոք եմ ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2.6. 06.02.2025թ. դատավոր Ն. Բաղալյանի կողմից որոշում է կայացվել բողոքաբեր Հ. Բաղդասարյանի բողոքի կապակցությամբ մինչդատական ակտի վիճարկման վարույթ հարուցելու և այն գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

2.7. 21.02.2025թ. Դատարանը մերժել է իմ բողոքը: Որոշումն ուղարկվել է 26.06.2025թ., ես այն ստացել եմ 01.07.2025թ.

2.8. 10.07.2025թ. Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկել եմ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

2.9. 21.07.2025թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ Ադրինե Ղուկասյանի նախագահությամբ որոշում է կայացրել հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելու և դատական վարույթը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

2.10. 31.07.2025թ. Վերաքննիչ դատարանը բողոքս մերժել է: Որոշումը ստացել եմ 11.09.2025թ.: Իսկ որոշումն ուղարկվել է, ինչպես վերևում նշվեց, 18.08.2025թ. (!?):

2.11. Փաստորեն, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը, Տավուշի մարզի դատախազությունը և քննչական վարչությունը ճիշտ են արել, որ ակնհայտ հանցագործությունները չեն տեսել, այլապես նրանք կհակադրվեին Հայաստանի ժողովրդին պատկանող իշխանությունը ուզուրպացրած վարչախումբի պարագլխի հայտարարություններին, այն, որ ոչ թե ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով են սահմանվում, թե որտեղով է անցնում Հայաստանի սահմանը և ինչպես են ապահովվում քաղաքացիների անվտանգությունն ու սեփականությունը, այլ ինքն է դա որոշում (նույնիսկ ավելացնում է, թե՝ ճիշտ է անում):

Պատվարժան դատարան

Արդեն նախորդ ատյանների բողոքներում նշել եմ, որ.

- Ներկայացնելով սույն բողոքն, ամենևին էլ հույս չեմ փայփայում, թե դատարանն իմ օգտին որոշում կկայացնի: Որովհետև այդ դեպքում Հայաստանի քաղաքացիների մոտ կարող է հավատ ընծայվել, թե դատարանն, իրոք, արդարադատության մարմին է, և դատական իշխանություն, որպես այդպիսին, գոյություն ունի: Դատարանի՝ այդպիսի որոշման արդյունքում, պարզապես, կփլվի այս հակահայկական իշխանական բուրգը և բազում պաշտոնյաներ կմնան դրա փլատակների տակ:

- Իսկ այն, որ մեր երկրում իշխող վարչախումբը թշնամական վերաբերմունք ունի Հայաստան պետության ու Հայոց պետականության, իսկ հիմա նաև՝ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ, արդեն հասկացել են նույնիսկ ամենանվիրյալ զոմբիները: Այն, որ Հայաստան պետության կառավարման ձևը քաքիստոկրատիան է, այսինքն՝ ստահակապետությունը, արդեն ընդունում են շատ իրավաբաններ ու քաղաքական գործիչներ: Այն, որ նիքյոլաթավիշեսկուն ունենալու է նիկոլաչաուշեսկուի (կամ՝ սլոբադանմիլոշևիչի, կամ՝ սադամհուսեյնի, կամ՝ մուհամմադմուրսիի, կամ՝ մուամարքադաֆիի) ճակատագիրն, արդեն բարձրաձայնում են անգամ ուսապարկերը:

-Եւ ես չեմ թաքցնում, որ բողոքը բերվում է այն պատճառով, որպեսզի Հայոց պետականությունը վերականգնելուց հետո պատասխանատվության կանչվեն նաև նիքյոլահաճո պաշտոնյաները, քանի որ նրանք են ապահովում այս թրքահպատակ իշխանության գոյությունը:

3. Բողոքի փաստական հիմքերը

2024թ. դեկտեմբերի 20-ին ստացել եմ Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Է. Դավթյանի՝ «քրեական վարույթ չնախաձեռնելու մասին» 12.12.2024թ. գրավոր տեղեկացումը, համաձայն որի իմ կողմից ներկայացված հաղորդումը չի համապատասխանում ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, քանի որ «Հ. Բաղդասարյանի կողմից տրված առրևույթ հանցանքի մասին հաղորդման և կից

փաստաթղթերի մեջ բացակայում են առերևույթ հանցանքի առկայության մասին վկայող բավարար տարրեր, մասնավորապես.

ա/ *բացակայում են առերևույթ հանցանքի մասին վկայող փաստական տվյալներ, որոնց ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական,*

բ/ բացի այդ, *հաղորդմամբ, ըստ էության, սուբյեկտիվ ընկալմամբ քննարկման առարկա է դարձվել Հայաստանի Հանրապետության միջազգային փոխհարաբերությունները և միջազգային պայմանագրերի ու դրանցից բխող հարաբերությունների վավերացման ընթացակարգերը, օրենսդրական կարգավորումները, որոնք ՀՀ քրեական օրենսգրքով կարգավորվող իրավահարաբերություններ չեն*»:

Տեսականորեն ընդունենք, որ իմ կողմից ներկայացված հաղորդումը չի համապատասխանում ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, այսինքն դրանով չի փաստվում *այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական* և

հաղորդումը չի ներկայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով, 256-րդ հոդվածի 1-ին մասով, 257-րդ հոդվածի 1-ին մասով, 259-րդ հոդվածի 1-ին մասով, 262-րդ հոդվածի 1-ին մասով, 263-րդ հոդվածի 1-ին մասով, 264-րդ հոդվածի 1-ին մասով, 265-րդ հոդվածով կամ 266-րդ հոդվածով նախատեսված հանցանք/ներ/ից տուժած անձը:

Սակայն այդպիսի դեպքերի համար գործում է ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. 4-րդ մասի դրույթն, այն է.

4. Ձանգվածային լրատվության միջոցներում առերևույթ հանցանքի մասին հրապարակված տեղեկությունները քննիչի համար կարող են քրեական վարույթ նախաձեռնելու առիթ լինել:

Հիմա՝ ըստ էության.

ա/ քննիչի կամ հսկող դատախազի համար Ոսկեպարի ու Կիրանցի տարածքների հանձնումը փաստ չէր, իրենք չգիտեին այդ մասին, ոստիկանական ուժեր այդ տարածքում կենտրոնացված չեն եղել, լրատվությամբ հաղորդումներ չեն եղել, իրենք էլ այդ ժամանակ լուսնի վրա էին ու Հայաստանի քաղաքացիներ չէին, և երկրում տեղի ունեցող իրադարձություններն իրենց չէր վերաբերում, և

բ/ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ու դրանցից բխող հարաբերությունների վավերացման ընթացակարգերի խախտումները ՀՀ քրեական օրենսգրքով կարգավորվող իրավահարաբերություններ չեն, ուստի դրանք քրեորեն պատժելի արարքներ չեն:

Այսինքն՝ նույն կերպ, հետայսու, քաղաքաշինական կամ հանրային ծառայության կամ ցանկացած այլ օրենքի խախտում քրեական օրենսդրության լույսի ներքո չպետք է դիտարկվի:

- Իյա՛, իրո՞ք: Իրո՞ք տարածքները տալը ու ՀՀ քաղաքացուն սեփականությունից զրկելը հանցագործություն չէ: Այսինքն՝ դրանք առերևույթ հանցանքի մասին վկայող փաստական տվյալներ չե՞ն: Հիշեցնում եմ այդ անձանց, որ ՀՀ Սահմանադրության 60 հոդ. համաձայն.

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Այն, որ քննիչն ու դատախազը ռեալ հանցագործությունները «չեն տեսնում» և խտրական մոտեցում են դրսևորում հանցագործությունը կատարած անձանց նկատմամբ, արդեն կայացած

փաստ է: ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը իշխանության յուրացումը համարում է հանցագործություն, 4-րդ հոդվածը սահմանում է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա, իսկ 6-րդ հոդվածը պետական պաշտոնատար անձանց պարտավորեցնում է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Եթե Հայաստանը լիներ իրավական պետություն, ինչպես նշված է Սահմանադրության հենց 1-ին հոդվածում, ապա սահմանագծումն ու սահմանազատումը կիրականացվեին ՀՀ Սահմանադրության ու միջազգային-իրավական նորմերին համապատասխան, ոչ թե պարզապես կբավարարվեին ռուս-թուրքական տանդեմի հարաճյուն պահանջները:

Հիմա Դուք պետք է դառնաք սատանայի փաստաբանը և ապացուցեք, որ մհերգրիգորյաններն ու նիքոլփաշինյանները հանցագործ չեն, նրանք ժողովրդին պատկանող իշխանությունը չեն յուրացրել, մարդկանց սեփականությունից չեն զրկել, ՀՀ տարածքները թշնամուն չեն հանձնել, բնակիչների նկատմամբ բռնություններ չեն գործադրել և, ընդհանրապես, մեր նմաններն են ապիկար, որ ամեն կերպ խոչընդոտում են «խաղաղության խաչմերուկի» (թե դա ի՞նչ է՝ ոչ ոք չգիտի) իրագործմանը: Եւ, ընդհանրապես. պետք է հիմնավորեք, որ այն ինչ տեղի է ունեցել, իրականացվել է այսինչ օրենքի այսինչ հոդվածի համաձայն:

Եթե քննիչը վարույթ նախաձեռներ, ապա ի հայտ էին գալու հետևյալ արարքներին գնահատական տալու խնդիրները.

ա/ Արդյո՞ք ՀՀ տարածքները թշնամուն հանձնելու նախօրյակին հնչած «Կիրանցը չտալու դեպքում շաբաթ օրը ադրբեջանցիները կմտնեն Հայաստան» արտահայտությունը ՀՀ քր.օր. 422 հոդ. 2-րդ մասով նախատեսված հանցակազմ չի պարունակում, այն է.

հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունները կամ զանգվածային լրատվության միջոցները կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով է *իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն, ինքնիշխանությունից հրաժարվելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչը:*

բ/ Արդյո՞ք թշնամու թելադրանքով սեփական տարածքներից հրաժարվելը ՀՀ քր.օր. 421 հոդ. 2-րդ մասով նախատեսված հանցակազմ չի պարունակում, այն է.

2. Ինքնիշխանությունից հրաժարվելուն՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը լրիվ կամ մասնակի սահմանափակելուն ուղղված գործողություններ կատարելը:

գ/ Արդյո՞ք այդ տարածքները տալը ՀՀ քր.օր. 421 հոդ. 1-ին մասով նախատեսված հանցակազմ չի պարունակում, այն է.

1. Տարածքային ամբողջականությունը խախտելուն՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքի մասն առանձնացնելուն կամ Հայաստանի Հանրապետության տարածքը կամ դրա մասն այլ պետությանը հանձնելուն ուղղված գործողություններ կատարելը:

դ/ Արդյո՞ք ականապատման քարտեզները թշնամուն տալը և ականազերծումն իրականացնելը ՀՀ քր.օր. 418 հոդ. նախատեսված պետական դավաճանության հանցակազմ չի պարունակում, այն է.

1. *Պետական դավաճանությունը՝ թշնամու կողմն անցնելը, … օտարերկրյա պետությանը, … պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հանձնելը կամ այդ տեղեկությանը նշված անձանց ծանոթանալու համար պայման ստեղծելը կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ ի վնաս*

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության:

ե/ Արդյո՞ք վարչապետի ու կառավարության մյուս անդամների (փոխվարչապետ, ՆԳ նախարար և այլն)՝ տարածքները տալու գործողությունները՝ առանց ՀՀ նախագահի համաձայնության, Սահմանադրական դատարանի որոշման ու Ազգային ժողովի վավերացման իրենց մեջ չեն պարունակում ՀՀ քր.օր. 419 հոդ. նախատեսված հանցակազմ, այն է.

1. *Իշխանությունը զավթելը՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաև Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության կամ Սահմանադրական դատարանի լիազորություններին տիրանալը*:

զ/ արդյո՞ք վարչապետի ու կառավարության մյուս անդամների (փոխվարչապետ, ՆԳ նախարար և այլն) կողմից չեն խախտվել Սահմանադրության 6-րդ հոդ. 1-ին մասը, համաձայն որի՝

1. *Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով*,

և արդյո՞ք այս առումով առկա չէ ՀՀ քր.օր. 420 հոդ. նախատեսված հանցակազմ:

1. *Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ հոդվածով կամ 5-րդ կամ 6-րդ հոդվածի 1-ին մասով կամ 7-րդ հոդվածով նախատեսված նորմի գործողությունը փաստացի դադարեցնելը*:

է/ Արդյո՞ք ՀՀ պետական սահմանի տեղաշարժ ու ոչնչացում չի եղել, ինչը նախատեսված է ՀՀ քր.օր. 471 հոդվածով, համաձայն որի հանցագործություն է համարվում.

1. *Հայաստանի Հանրապետության պետական սահմանի նշանը վերցնելը, տեղաշարժելը կամ ոչնչացնելը*:

ը/ Արդյո՞ք պետության կողմից իր քաղաքացիների գույքը չպահպանելը կամ թշնամուն հանձնելն իր մեջ չի պարունակում ՀՀ քր.օր.265 հոդ. նախատեսված հանցակազմ, համաձայն որի.

1. *Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն ունեցող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե այդ անձի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ, և եթե չկան հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշներ*:

թ/ Այս ամենով հանդերձ, արդյո՞ք քննիչն ու հսկող դատախազն իրենց ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելով թույլ չեն տվել ՀՀ քր.օր.441 հոդ 2-րդ մասի 4-րդ կետով *կամ* էլ ՀՀ քր.օր.446 հոդ. 1-ին մասով նախատեսված արարք, այն է.

(441) *մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ իրենց իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ իրենց ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն էական վնաս է պատճառել … հասարակության կամ պետության օրինական շահերին*:

կամ էլ (446) *Պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին*:

Վերաքննիչ դատարանի առաջ բարձրացրել էի նաև հետևյալ հարցը.

ՀՀ քր.դատ.օր. 304 հոդ. 2-րդ մասի համաձայն.

2. Ամեն դեպքում, բողոքը բավարարվում է, եթե վարույթի ***հանրային մասնակիցը չի ներկայացրել դատարանի պահանջած նյութերը****:*

- Դատարանի որոշման մեջ նշում չկա հանրային մասնակցի կողմից դատարանի պահանջած նյութերը ներկայացնելու վերաբերյալ, ինչը նշանակում է, որ.

ա/ դատարանը չի պահանջել նյութեր,

բ/ դատախազը չի ներկայացրել նյութեր:

Եթե դատարանը պահանջել է, իսկ դատախազը չի ներկայացրել նյութերը, ուրեմն պետք է օրենքի ուժով իմ բողոքը համարել բավարարված: Իսկ եթե դատարանը չի պահանջել նյութերը, նշանակում է ինքը դարձել է դատավարության կողմ և պաշտպանել է դատախազության շահերը:

Սակայն այս հարցը նույնպես մնաց անպատասխան:

Ուստի ՀՀ վճռաբեկ դատարանի առջև բարձրացվում է նաև ՀՀ քր.դատ.օր. 304 հոդ. 2-րդ մասի իրավակիրառ կարգավորման հարցը.

- արդյո՞ք դատարանի որոշման մեջ չպետք է արձանագրվի հանրային մասնակցի կողմից նյութերը ներկայացնելու կամ չներկայացնելու հանգամանքը:

4. <u>Բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և իմ պահանջը</u>

4.1. Սույն բողոքի հիմքն այն է, որ իշխանության եկած ուժը ունենալով տարածքները հանձնելու ծրագիր, այդ մասին տեղյակ չի պահել իշխանության տիրոջը՝ ժողովրդին և խաբելով ու մոլորության մեջ գցելով նրան, ստացել է քվեներ և այն օգտագործել ի վնաս ՀՀ պետականության ու տարածքային ամբողջականության:

4.1.1. Եթե մեկը խաբեությամբ մեկ ուրիշից գումար է վերցնում ու չի տալիս, նրան խարդախության համար դատում են, իսկ որ մի ամբողջ երկրի ժողովրդի են խաբում, դա հանցագործություն չի համարվում: Ի՛նչ, իրո՞ք…

4.2. Մեկ-երկու իրավական ու փաստական հիմքեր բերեմ առ այն, որ Ոսկեպարն ու հարակից գյուղերը Հայաստան են, թեպետ ապացուցման բեռը նրանց վրա է, ովքեր պնդում են, թե դա Հայաստան չէ: Այսպես.

- 1920 թ. փետրվարի 24-ին կազմված «Զեկույց եւ առաջարկներ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի» փաստաթուղթը, որի տակ դրված են Ազգերի լիգայի Խորհրդի անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի լիազոր ներկայացուցիչների ստորագրությունները: Սույն զեկույցում հստակեցվել են սահմանազատման սկզբունքները Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության, Հայաստան պետության և Վրաստանի Հանրապետության միջեւ, որտեղ նշված է. «Ինչ վերաբերում է Հայաստան պետության եւ Վրաստանի, ինչպես նաեւ Ադրբեջանի սահմանին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ ներկայումս նախընտրելի է սպասել վերոնշյալ սահմանների հստակեցման վերաբերյալ այնպիսի համաձայնության արդյունքներին, որոնց երեք հանրապետություններն իրենք կհանգեն պայմանագրերի մեջ: Այն դեպքում, եթե սույն հանրապետություններն իրենց սահմանների վերաբերյալ չեն հանգի որեւէ համաձայնության, ապա հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի իրավարարությանը, որը կստեղծի Միջդաշնակցային Հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները»:

- 1920 թ. ապրիլի 19-26 Սան Ռեմոյում տեղի ունեցած վեհաժողովի արդյունքներով կայացված համաձայնագիրը, որով հաստատվեցին նոր պետությունների՝ նույն թվում և՝ Հայաստանի սահմանները և իբրև այդպիսին՝ 1920 թ. մայիսի 11-ին ճանաչվեցին սուլթան Մեհմեդ VI Վահիդեդինի իշխանության, այսինքն թուրքական օրինական կառավարության կողմից:

- 1920թ. մայիսի 23-ի «Հայաստանի ներկայ տերիտորիայի չորս նահանգների սահմանների մասին» ՀՀ օրէնքը, համաձայն որի Հայաստանի չորրորդ՝ Սիւնեաց նահանգի մէջ մտնում էին «Զանգեզուրը եւ Ղարաբաղը՝ Վարանդան, Խաչենը, Գիւլիստանը, Դիզակը եւ Գանձակի գաւառի հայկական մասերը»:

- 1920թ. օգոստոսի 10-ին, Թիֆլիսում ՌՍՖՍՀ - ՀՀ միջև կնքված պայմանագիրը, որով ռուսները Հայաստանի տարածք են ճանաչել ոչ միայն Ներքին Ոսկեպարն ու Բաղանիս-Այրումը, այլ նաև այժմ արհեստածին Ադրբեջանի կազմում գտնվող Ղուշչի-Այրում, Մազամ և Ֆարահլի գյուղերը:

